Արձանագրություն 2

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.02.2021թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գոռ Մարտիրոսյան - Ֆինանսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Գևորգ Մուրադյան - Հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ (ԳՊ/ԳԱ)

Տիգրան Ներսիսյան - Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԳԱ)

Վահե Գարեգինյան - Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)

Մանուշակ Հակոբյան - Հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները

1.1«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել.

- «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն՝ ՀՎՀՀ 01569792, էլ. հասցե՝ bdo@bdoarmenia.am
- «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 02618043, էլ. հասցե՝ general@asatryans.com
- «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կոնսորցիում՝ ՀՎՀՀ R027651515, 00040569 էլ. հասցե՝ office@ro.gt.com, gta@am.gt.com

2. Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում ներառված համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի 3.2 կետի, որի համաձայն պատվիրատուն վճարելու է առաջնային գործընկերոջ դուրս գրած հաշիվ-ապրանքագրերը, ինչը հակասում է ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 7-րդ ենթակետի գ պարբերությանը, որում ասվում է. «պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին»:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 Աուդիտորական ծառայություն	
	Նախահաշվային գին՝ 9 600 000	
«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ	4 400 000	5 280 000
«Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կոնսորցիում	6 000 000	7 200 000
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	7 450 000	8 940 000

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց. .

5.1 Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել.

5.2 Ծանուցել «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կոնսորցիումին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և ուղարկել davit.gasparyan@hven.am էլեկտրոնային հասցեին:

5.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն թվականի փետրվարի 10-ին ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գոռ Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գևորգ Մուրադյան

Տիգրան Ներսիսյան

Վահե Գարեգինյան

Մանուշակ Հակոբյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան